Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

15 դեկտեմբեր 2023թ. ք. Մեծամոր

«ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Է. Մարտիրոսյանս ծանոթանալով «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-186/23» ծածկագրով հրապարակված գնման ընթացակարգը

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար փական փակիչ-կարգավորիչի ձեռք բերման նպատակով 2023թ. նոյեմբերի 13-ին հրապարակվել է «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-186/23» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ ընթացակարգ): Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «Սիգմա Էլեկտրոնիկս» ՍՊԸ-ն: Հայտի ուսումնասիրման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ «Սիգմա Էլեկտրոնիկս» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել ապրանքի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխանող տեխնիկական բնութագիր: Առաջնորդվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման Հավելված 1-ի 41-րդ կետով՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել նիստը կասեցնել և «Սիգմա Էլեկտրոնիկս» ՍՊԸ-ին առաջարկել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Սահմանված ժամկետում «Սիգմա Էլեկտրոնիկս» ՍՊԸ-ն չի շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման Հավելված 1-ի 42-րդ կետով գնահատող հանձնաժողովը 2023թ դեկտեմբերի 7-ի թիվ 2.1 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Սիգմա Էլեկտրոնիկս» ՍՊԸ-ի մասնակցության հայտը գնահատել է անբավարար և մերժել է այն:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6 հոդվածի 1-ին և 2-րդ մասերով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «Սիգմա Էլեկտրոնիկս» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ՀՀ Ֆինանսների նախարարությանը և մասնակցին տրամադրելու օրվանից:
3. Որոշումը կայացնելու հաջորդող օրը այն տրամադրել ՀՀ ֆինանսների նախարարությանը և «Սիգմա Էլեկտրոնիկս» ՍՊԸ-ին:

Գլխավոր տնօրեն **Է. Մարտիրոսյան**